ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԹԱՏԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՕՋԱԽԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

ԱՐՓԻՆԵ ՏԱՏԻՆՅԱՆ

Արևելահայ դրամատիկական նոր թատրոնի մի շարք խնդիրներ այսօր լրացուցիչ ճշտման և պարզաբանման կարիք ունեն։ Դրանցից կարևորագույնը արևելահայ թատրոնի սկզբնավորմանը վերաբերող վկայություններն են։ Ըստ մի քանի հայտնի աղբյուրների, Թիֆլիսում հայկական առաջին ներկայացումները տեղի են ունեցել անցյալ դարի 20-30-ական թվականներին։ 1828 թ. Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում Հարությունն Ալամդարյանը, աշակերտների ուժերով, թատերական ներկայացումներ է կազմակերպել[1]։ Սակայն այդ թատերականացված հանդեսները չեն կարող նոր թատրոնի սկիզբ համարվել, քանի որ դրանք պարզապես դպրոցական ուսուցման ավանդական ձևերից են եղել։

Այսօր էլ փաստի ուժ ունի հիշողություններով ավանդված մի այլ տեսակետ, ըստ որի արևելահայ նոր թատրոնի սկզբնավորման տարեթիվը համարվում է 1836-ը և առնչվում Գալուստ Շիրմազանյանի անվան հետ[2]։ Սա, ինչպես ժամանակին նկատել է թատերագետ Սարգիս Մելիքսեթյանը, «տակավին չհաստատված մի տեղեկություն է», որը նա չի փորձել ապացուցել[3]։ Անցյալ դարի 90-ական թվականներին և մեր դարասկզբին հայ թատրոնի անցյալով հետաքրքրվող բանասերները ոչինչ չեն ասում այս մասին։ Եվ ահա, մեր դարի 30-ական թվականների սկզբին ավանդական տեղեկությունն անցնում է Արամ Երեմյանի «Ռուսահայ թատրոնի պատմության» էջերը որպես հավաստի տվյալ[4], իսկ մեր օրերում ընդունվում է որպես տարեգրական փաստ։ Ասվում է, որ Շիրմազանյանը 1836 թ. Թիֆլիսի իր սեփական տան դահլիճը վերափոխելով, ստեղծել է առաջին թատերական շենքը քաղաքում և սկիզբ դրել հայկական առաջին ներկայացումներին[5]։

Այսպիսով, մեր առջև ոչ թե սոսկ մասնակի հետաքրքրություն ներկայացնող մի հարց է, այլ չափազանց կարևոր՝ XIX դ. առաջին կեսի հայ թատերագրության ու թատրոնի ուսումնասիրության տեսակետից։ «Շիրմազանյան դարբաս» կոչվող թատերաշենքը իսկապես առաջինն է Թիֆլիսում։ Բայց ե՞րբ է հիմնվել և ինչպես։ Անհրաժեշտ է քննել բուն իրավիճակը և հնարավորին չափ հստակել հայ նոր թատրոնի սկզբնավորման ջրջանի այս հետաքրքիր երևույթը։

Արդ, ո՞վ էր Գալուստ Շիրմազանյանը և ի՞նչ անհրաժեշտությամբ ըստեղծվեց նրա անվան հետ կապված «Շիրմազանյան դարբասը»։ Գալուստ Շիրմազանյանը արևելահայ նոր մտավորականության առաջին սերնդի ներկայացուցիչներից է։ Չափազանցում չի լինի, եթե ասենք, որ Շիրմազանյանի «Ընկարագրութիւնք ինչ-ինչ գործոց...» կատակերգությունը պատմականորեն բացառիկ է։ Շիրմազանյանի կենսագրական մանրամասները մեզ չեն հասել։ Նա ծնվել է 1807 թ. պարսկահայ վաճառական Հարություն Վարդանյանի ընտանի-

---

1 Բ. Հարությունյան, XIX—XX դարերի հայ թատրոնի տարեգրություն, հ. 1, Երևան, 1982, էջ 11—12։

2 «Հայկական սովետական հանրագիտարան» (այսուհետև՝ ՀՍՀ), հ. 8, Երևան, 1982, էջ 487։

3 Գ. Զմշկյան, Իմ հիշատակարանը, Երևան, 1953, էջ 182։

4 Ա. Երեմյան, Ռուսահայ թատրոնի պատմությունը, հ. Ա, Վենետիկ— Ս. Ղազար, 1973, էջ 95--96։

5 Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 487։

բում[6]։ 1818-ին Հարությունն իր ընտանիքով գաղթում է Նոր Նախիջևան, այնուհետև Ներսես Աշտարակեցու հրավերով 1820-ին տեղափոխվում է Թիֆլիս։ Հարություն Վարդանյանը եղել է պարսից շահի մատակարարը, և այդ գործը հետագայում անցել է նրա որդիներին։ Բարձր գնահատելով Հարությունի ծառայությունները, պարսից շահը նրան շնորհել է «Շիրմազան» պատվանունը, որ բառացի թարգմանվում է «առյուծազարմ»։ Վարդանյան ընտանիքի համար դա դարձել է տոհմական ազնվականության տիտղոս և հետագայում վերածվել ազգանունի[7]։ Թիֆլիսում Հարությունի որդի Գալուստ Վարդանյան-Շիրմազանյանը աշակերտել է Պողոս վարդապետ Ղարաղաղցուն, որը 1822 թ. ուսուցչություն էր անում քաղաքի կենտրոնական Տափիթաղի վանքի խցերում[8]։ 1825-ի սկզբին նրա անունը, իր եղբայրներ Աղաջան-Հովհաննեսի ու Գևորգի անունների հետ միասին, տեսնում ենք նորաբաց Ներսիսյան դպրոցի առաջին վաթսունինը աշակերտների ցուցակում[9]։ Այդ ցուցակում են նաև Խաչատուր Աբովյանը, Ստեփանոս Նազարյանը, Ստեփանոս Ներսիսյանը (ապագա նկարիչ) և հետագայում ճանաչված ուրիշ անուններ։ Դպրոցի տեսուչ Հարություն Ալամդարյանի հրատարակած «Երախայրիք Ներսիսյան դպրոցի» խորագրով աշակերտական ալմանախում կարդում ենք պատանի Գալուստ Շիրմազանյանի բանաստեղծությունները[10]։

Շիրմազանյանն իր առաջին պիեսը գրել է 1826 թ., երբ Թիֆլիսում դեռևս թատրոն չկար, և նրա տեսած կրթական միջավայրում դրա գաղափարն իսկ անհայտ էր։ Ուրեմն, ի՞նչ ճանապարհով էր դրամատիկական ձևի պատկերացումը հասել նրան։ Դիմենք իր վկայությանը. «Բարեհիշատակ Պողոս վարդապետն Ներսիսյան, որուն հանգուցյալ Մեսրոպ Թաղիադյանցն ու Ստեփանոս վարդապետն Նազարյանց Ղարաբաղցի անվանեն, Թիֆլիսի Ներսիսյան վարժարանումն դասատու էր հայկաբանության, 1826 թվին հինգերորդ դասատան աշակերտացն (յորոնց մինն ես էի) սկսեց ճարտասանության դաս տալ, հրամայեց աշակերտացն մին-մին վիպասանություն գրել»[11]։ Ինչպես տեսնում ենք, դրամա, պիես կամ թատերգություն բառերն անծանոթ են եղել, և նույնիսկ տարիներ անց Շիրմազանյանն իր առաջին թատերագրական փորձն անվանում է վիպասանություն։

Որպես շարադրության նյութ տասնյոթամյա աշակերտ Գալուստն ընտրում է հին Նախիջևանում կատարված մի դեպք, որին ականատես է եղել մանկության օրերին։ Շարադրությունը նա վերնագրել է «Ասրի բեկ և Գիքի»։ Ծանոթանալով թեմային, Պողոս վարդապետը խստորեն ասում է. «Այս պատմությունը քո խելքի բանը չէ»։ Շիրմազանյանի արխիվում պահպանված է եղել շարադրության ձեռագիր օրինակը՝ Պողոս վարդապետի դիտողություններով։ «1860 թ. մին օր, — գրում է Շիրմազանյանը, — Թավրիզու մոտ Զինղանաբ գյուղում հին թղթերս պատեղոյս ժամանակ, ձեռս ընկավ իմ երեխայությանս ժամանակումը գրած և հանգուցյալ Պողոս վարդապետի սրբագրած վերոհիշյալ վիպասանությունը։ Նույն ձմեռն մնալով Զինղանաբ գյուղումն, գիշերները երկար լինելով մտքումս դրի պարապ ժամանակս էս աղգային անցից վերապարապել»[12]։

---

6 Տե՛ս ZUZ, հ. 8, էջ 487։

7 Գ. Շիրմազան, Մի քանի էջ հայկական թատրոնի պատմությունից (տնոյեմբերոյ, 1932, № 1, էջ 171)։

8 Գ. Հակոբյան, Խաչատուր Աբովյան; Երևան, 1967, էջ 177—178, 217—218։

9 Նույն տեղում, էջ 177—178։

10 Գ. Շիրմազանյան, Նկարագրություն ինչ-ինչ գործոց... [«Մատենադարանի դիտական նյութերի ժողովածու», № 2. Երևան, 1950, էջ 99 (այսուհետև՝ ԳՆԺ)]։

11 Գ. Շիրմազանյան, Ասրի բեկ և Գիքի («Կոռնկ Հայոց աշխարհի», Գ տարի, դեկտեմբեր, 1862, էջ 897)։ Պողոս վարդապետի անունը որոշ ժամանակակիցներ (նաև Շիրմազանյանը) երբեմն շփոթել են, անվանելով Ղարաբաղցի։ Հիմնվելով Գ. Հակոբյանի «Խաչատուր Աբովյան» աշխատության վրա, հիշատակում ենք համարում Պողոս Ղարաղաղցի դրությունը։

12 Նույն տեղում, էջ 899։

Կարծիքներ կան, որ «Ասրի բեկ և Դիքին» նախ գրվել է արձակ, որպես վեպ, և հետագայում միայն հեղինակն այն վերածել է դրամատիկական շարադրանքի։ Աս. Մնացականյանը գրում է. «Շիրմազանյանի գրական առաջին ծավալուն գործը եղել է մի վեպ՝ գրված 1826 թվին՝ Պողոս Ղարադաղցի վարդապետի առաջարկով, որի հիման վրա հեղինակը 1860 թվին գրել է իր «Ասրի բեկ և Դիքի» պիեսը»[13]։ Համոզի՞չ է արդյոք այս կարծիքը։ Պատասխանը գտնում ենք պիեսի նախաբանում. «...նախ սկսեցի թատերգությունս արձակ շարադրությամբ շարունակել»[14]։ Հեղինակը գրական իր առաջին շարադրանքն անվանում է «թատերգություն»։ Հետևաբար, դա արձակից արված բեմականացում չէ, այլ սկզբից իսկ գրվել է տրամախոսությամբ և մշակվել ու ավարտվել 1860 թ.։ Հարց է առաջանում՝ ինչու՝ է դպրոցական շարադրությունը դրբվել տրամախոսական եղանակով։ Նկատի առնենք, որ տրամախոսությունը դպրոցական ուսուցման մեջ ընդունված է եղել որպես ճարտասանական խոսքի կառուցման ձև՝ միջնադարյան դպրոցից եկող ավանդություն[15]։ Դրամատիկական արտաքին ձևի գաղափարը Շիրմազանյանն ուներ թատերական արվեստին առնչվելուց անկախ։ Ներսիսյան դպրոցի հիմնադրման շրջանում Թիֆլիսում թատրոն չկար։ Պողոս վարդապետին հուզել էր ոչ թե շարադրության արտաքին կերպը, այլ թեման։ Տրամախոսությունը ճարտասանության ուսուցչի համար միանգամայն հասկանալի եղանակ էր։ «Թատերագրություն» բառը հետագայում է մտել գործածության մեջ։

Այսպիսով, Շիրմազանյանի «Ասրի բեկ և Դիքի» պիեսը հայ թատերագրության պատմության մեջ իմաստավորվում է որպես 60-ական թվականների ազգային-ազատագրական ձգտումների մի դրսևորում։ Բեմադրվելու մասին, սակայն, որևէ տեղեկություն չունենք։ Անհամեմատ մեծ է նրա «Նկարագրութիւնք ինչ-ինչ գործոց...» պիեսը, որը գրված է հայ թատերագրության համար բոլորովին նոր՝ կոմեդիա-պամֆլետի ժանրով։ Մխիթարյան հեղինակների պատմական ողբերգությունների և բարոյախոսական մի քանի կատակերգությունների ֆոնի վրա ստեղծվում է սոցիալական կատակերգության թերևս առաջին օրինակը հայ դրականության մեջ՝ ժամանակի արևելահայ լեզուների միատեղ գործադրումով, մասնավորապես նույն շրջանում կամ ավելի վաղ, քան Աբովյանը։ Շիրմազանյանը ակամա կամ մտադրված դառնում է իր ժամանակի կյանքի ինչ-ինչ բնորոշ կողմերի քննադատողը։ Պիեսում նա ի հայտ է բերում հայ կղերականության հոգևոր ու բարոյական անկումը՝ կաշառակերությունը, ստորաքարշությունը ռուս աստիճանավորների ու իշխանավորների առջև և այլն։ Պիեսը չի տպագրվել, արտագրվել է և գաղտնի տարածվել։ Հեղինակի անունն անգամ հրապարակելը մեծ համարձակություն էր, քանի որ անխուսափելի էին դատն ու բանտարկությունը։

Շիրմազանյանի պիեսի առաջին հիշատակությունը գտնում ենք Մարկոս Աղաբեկյանի «Հայ թատրոնի անցյալը» հոդվածում[16]։ Այս հիշատակումը չունի իր վավերականությունը հաստատող այլ աղբյուր կամ զուգահեռ, որևէ տվյալ։ «Կարելի է, որ թվականի և անունների մասին շփոթեմ, — գրում է Մ. Աղաբեկյանը, — դրանց որոշ հիշելը անկարող լինելով, այդ մասին ներողություն եմ խնդրում պարոնանցը։ Թիֆլիսում առաջին անգամ թատր հորինող է լինում, նույնիսկ Թիֆլիսու հայոց կյանքը վեր առնել պարոն Գալուստ Շիրմազանյանցը...։ Իր թատեր առարկան է ստել նույն քաղաքի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսին, որ երբեմն առաջնորդ եղավ բազմաթիվ հայոց ոչ միայն հովվելու, այլ և քրիստոնեից մեղրաբուխ երկիրը տանելու, որպեսզի լույս տեսնան այնտեղ։ Առարկա է արել նաև Էջմիածնի սինոդն ու Հովհաննես կաթողիկոսը, ռուսաց կառավարությունը, Թիֆլիսու հայոց ժողովուրդը և այլն։

---

13 Գնժ, էջ 99։

14 Գ. Շիրմազանյան, նշվ. աշխ., էջ 899։

15 Հմմտ. Հ. Հովհաննիսյան, Թատրոն. հին և նոր արժեքներ, Երևան, 1986, էջ 67։

16 Մ. Աղաբեկյան, Հայ թատրոնի անցյալը («Փորձ», 1879, № 10, էջ 63)։

Թեև հետաքրքրական կարողացել է անել յուր հատվածը, այն ժամանակի եկեղեցական անկարգ ընթացքը դուրս բերելով, ամեն մեկ գավառցի հայն յուր բարբառով խոսեցնելով, ռուսաց կառավարիչները կաշառակեր ցույց տալով, բայց հատվածի նպատակն ավելի մի պարսավ է յուր հանդես դուրս բերած անձինքների վերա, քան թե նրանց բնական պատկերը... Այդ եղելությունը տեղի է ունենում 1836 թվերում։ Թատրը խաղացվում է, ասում են, առաջին անգամ նույնիսկ հեղինակի տանը մի դարբասում մի կամ երկու տարուց հետո։ Իմ գիտցածն՝ այդ կերպով է սկսում թատերական նոր նիստը Թիֆլիսու հայոց մեջ»[17]։ Ինչպես նկատել է Աս. Մնացականյանը, «այստեղ նույնիսկ խոսք չկա պիեսի հորինման մասին»[18]։ 1836-ը Կարապետ եպիսկոպոսի՝ Վրաստանի և Իմերեթիայի հայոց հոգևոր թեմի առաջնորդ լինելու սկիզբն է և ոչ՝ պիեսի ստեղծման տարեթիվը։ Իսկ բեմադրության տարեթվի մասին խոսք լինել չի կարող։

Աս. Մնացականյանը Շիրմազանյանի պիեսի երկու ձեռագիր օրինակները գտել է Երևանի Մատենադարանում (ձեռ. № 3045, 8810) և ցույց տվել պիեսի հորինման տարեթիվը՝ 1841 կամ 1842[19]։ Մատենադարանի 3045 ձեռագրում նշված 1841 թիվն անգամ ստույգ չէ, քանի որ պիեսում վերարտադրվող դեպքերը հասնում են մինչև 1842 թիվը։ Աս. Մնացականյանը փաստորեն ուղղում է մտցրել արևելահայ թատրոնի սկզբնավորման շրջանի տարեթվերում, և, այնուամենայնիվ, 1836 թիվը մտել է հայ թատրոնի տարերգության մեջ, իսկ Գալուստ Շիրմազանյանը համարվել է ներկայացումների կազմակերպիչ և Թիֆլիսի քաղաքագլուխ 1836-ին[20]։

Տարեգրական արձանագրման աղբյուրների մասին կարելի է միայն էնթադրություններ անել, քանի որ հեղինակը դրանք չի նշել։ Ոչ մի աղբյուր չի երևում նաև Արամ Երեմյանի «Ռուսահայ թատրոնի պատմությունը» աշխատությունում։ «1836 թվին,— գրում է հեղինակը,— «Շիրմազանյան դարբասում», ո՞ր պիեսն է բեմադրվում, ովքեր են առաջին դերակատարները, տարաբախտաբար չունինք փաստական տվյալներ։ Այսքանը միայն պարզ է, որ 1836 թվին ներկայացվում է կենցաղային մի պիես։ Դրա հեղինակն էր Գալուստ Շիրմազանյանը»[21]։ Հաջորդ տողերում, սակայն, Ա. Երեմյանը ենթադրությունից անցել է հաստատման, տվել երկու պիեսի ու երկու ներկայացման գաղափար։ «Միայն այս ներկայացումից հետո, — գրում է նա, — Շիրմազանյանը ստեղծում է սուր սատիրական մի պիես («Նկարագրութիմնք ինչինչ գործոց...»— Ա. Տ.), որտեղ առաջին անգամ հայ թատերական գրականության մեջ տեսնում ենք ռուս չինովնիկներին։ Այն թեման, որ նա նշմարել էր պիեսում, միանգամայն նորություն էր հայ թատրոնական գրականության մեջ։ Պիեսն առաջին անգամ խաղացել են 1836 թվին, հենց հեղինակի՝ Գալուստ Շիրմազանյանի դարբասում, սահմանափակ հանդիսատեսների նեղ շրջանում»[22]։

Ա. Երեմյանի միակ աղբյուրը Մ. Աղաբեկյանի «Հայ թատրոնի անցյալը» հոդվածն է, որտեղ, ինչպես տեսանք, խոսվում է մեկ պիեսի մասին և բերվում է մեկ տարեթիվ՝ 1836, որը Կարապետ եպիսկոպոսի՝ Վրաստանի և Իմերեթիայի հայոց հոգևոր թեմի առաջնորդ դառնալու մոտավոր ժամանակն է՝ Աղաբեկյանի հիշողությամբ։ Ի դեպ, Աս. Մնացականյանի ճշտումից հետո հայ թատրոնի պատմաբան Վահրամ Թերզիբաշյանը համոզվել և ընդգծել է, «որ

---

17 Նույն տեղում, էջ 63։

18 Գնա, էջ 101։

19 Նույն տեղում։

20 Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 14։ Սակայն հիշենք, որ Գալուստ Շիրմազանյանը քաղաքագլուխ է դարձել առաջին անգամ 1862 թ., երկրորդ անգամ՝ 1865 թ.։

21 Ա. Երեմյան, նշվ. աշխ., էջ 95—96։

22 Նույն տեղում։

պիեսը հորինված է 1841-42 թվերի ընթացքում և ոչ ուշ»[23]։ Թվում է, թյուրիմացությունը պետք է արդեն կանխվեր։

Վերադառնանք սակայն Շիրմազանյանի կենսագրությանը։ 1832 թվին նա հոր գործերով մեկնում է Թավրիզ[24]։ Սկսվում է պարսից շահի երիտասարդ մատակարարի անհանգիստ կյանքը։ Միայն 1862 թվականին (իր վկայությամբ՝ 1863-ին) նա վերադառնում է Թիֆլիս և նույն տարում էլ ընտրվում քաղաքագլուխ։ Այս շրջանում էլ հրատարակվում են նրա երեք պիեսները։ Ուշիշ երեսուն տարի Շիրմազանյանի ծառայողական կարիերան Թիֆլիսից դուրս էր և կապված էր Պարսկաստանի ու շահի պալատի հետ։ Իսկ այդ ընթացքում շատ բան էր փոխվել Անդրկովկասի քաղաքական ու տնտեսական կյանքում։

1863 թվականին Թիֆլիսում գործում էին Պերճ Պողոշյանի և Գևորգ Զմբշկյանի թատերախմբերը, որոնցից և ոչ մեկը չի անդրադարձել Շիրմազանյանի պիեսներին։ Հավանաբար պատճառը այդ պիեսների դրամատուրգիական կառուցվածքի թուլությունն էր։ Շիրմազանյանի թատերագրական անփորձությունն ակնարկում է Մ. Աղաբեկյանը. «Անփորձ թատերական արվեստում նա կարծել է, թե թատր ձևացնել կամ թե մի անցք կամ դեպք խաղի առնելը միայն մի քանի անձիքների միջում մի խոսակցություն է հարկավոր սարքել...»[25]։

Տպավորությունն այն է, թե Շիրմազանյանի պիեսները գրված են ոչ թե բեմադրվելու, այլ ընթերցվելու համար։ Դժվար չէ ապացուցել, որ հեղինակը վատ գիտեր բեմը։ Նրա կատակերգության մեջ կան նշագրումներ[27], որոնց իրականացումը բեմում անհնար է։ Սրանք տեխնիկական խնդիրներ են։ Նկատի առնենք հասարակական իրավիճակը։ Կարապետ եպիսկոպոս Բագրատունին մինչև 1856 թիվը թեմական առաջնորդ էր, և Վրաստանի հայոց կրթական կյանքը նրա հովանավորության ու հսկողության տակ էր։ Այդ օրերին ո՞վ և ինչու՞ պետք է սուր ճոճեր Կարապետ եպիսկոպոսի դեմ։ Հայտնի է մի բան, որ «այս պիեսի ձեռագիրն այն ժամանակ գաղտնի էին տարածում, իսկ ոստիկանությունը փնտրում էր նրա անհայտ հեղինակին։ Կարապետ եպիսկոպոսը դիմել էր ոստիկանությանը՝ պիեսի հեղինակին գտնելու և պատժելու»[28]։

Բոլոր հիմքերն ունենք մտածելու, որ Շիրմազանյանի կատակերգությունը 40-ական թվականներին չի բեմադրվել Հարություն Շիրմազան Վարդանյանի «Դարբասում»։ Լավագույն դեպքում դա կարող էր լինել պիեսի ընթերցում։ Նկատենք նաև, որ Գալուստ Շիրմազանյանի թղթերում ոչ մի ակնարկ չկա բեմադրության մասին։ Բերենք Գալուստ Շիրմազանյանի եղբորորդու՝ Վասիլ Շիրմազանյանի հուշերից մի հատված, որն անուշադրության են մատնել հայ թատրոնի պատմության ուսումնասիրողները. «Ըստ եղած տեղեկությունների (դրանց մասին պատմում էր հայրս) այդ երկը փորձել են ներկայացնել Շիրմազանյան տան դարբասում, որտեղ և մոտ 20 տարի անց տեղի ունեցան հայկական առաջին ներկայացումները»[29]։ Ուրեմն, ոչ թե ներկայացրել են, այլ փորձ են արել ներկայացնելու։ Այս տեղեկությունն ավելի հավանական է թվում։

Կենսագրական փաստերը վկայում են, որ 60-ական թվականներին Գալուստ Շիրմազանյանը հետաքրքրություն չի ցուցաբերել թատրոնի հանդեպ։ Լինելով Թիֆլիսի քաղաքագլուխ, նա ոչ մի մասնակցություն չի ունեցել հայ

---

23 Ա. Թերզիբաշյան, Հայ դրամատուրգիայի պատմություն. 1668—1868, Երևան, 1959, էջ 260—261։ Հեղինակը, չունենալով որևէ վկայություն, այն մտքին է մնում, որ 1820—40-ական թվականներին «Շիրմազանյան դարբասում» եղել են հայերեն ներկայացումներ (տե՛ս նույն տեղում, էջ 265)։

24 Գ. Շիրմազանյան, Նյութեր ազգային պատմության համար։ Երևելի հայկազունք ի Պարսկաստան, Ռոստով, 1890։

25 Տե՛ս ՀՍՀ, հ. 8, էջ 487։

26 Մ. Աղաբեկյան, նշվ. աշխ., էջ 63։

27 Գնա, էջ 149, 163, 164։

28 Գնա, էջ 100։

29 Դր. Շիրմազան, նշվ. հոդվ., էջ 172։

ազգային թատրոնի ստեղծման գործին, որի կենտրոնում էին Գ. Գոռշյանը, Մ. Գատկանյանը, Հ. Կարենյանը, Գ. Զմշկյանը։ Նրա անվանը շենք հանդիպում թատրոնը ֆինանսավորող հոգարարձուների ցուցակում։ Ավելին. 1862-65 թվականներին, «Շիրմազանյան դարբասում» ընդամենը մեկ ներկայացում է եղել, որը, ըստ Բ. Հարությունյանի կազմած տարեգրության, տեղի է ունեցել 1864 թվի սեպտեմբերի 7-ին[30]։ Վերջապես, 1893 թվին Թիֆլիսի քաղաքային թատրոնում մեծ շուքով տոնվել է հայ բեմի 35-ամյակը[31]։ Հոբելյանի կազմակերպիչները հայ թատերական կյանքի սկիզբ են համարել Հ. Դուրգենբեկյանի «Հաշի Սուլեյման» կատակերգության ներկայացումը 1858 թ. Մոսկվայում։ Իսկ այս ներկայացման 50-ամյակը Թիֆլիսում տոնվել է 1908 թվին[32], թատրոնին, նաև մոտավոր անցյալի դեպքերին մոտ կանգնած մարդիկ ինչու՞ չէն հիշում 1836-ը, այլ քսաներկու տարով գալիս են այս կողմ։

Այնուամենայնիվ, երբ և ինչպես ստեղծվեց «Շիրմազանյան դարբաս» կոչվող թատերասրահը։ Դիմենք Վասիլ Շիրմազանյանի պատմածին[33]։

Շիրմազանյան ընտանիքի հայրը՝ Հարություն Շիրմազան Վարդանյանը, գալով Թիֆլիս (1820 թ.), Մողնի եկեղեցու մոտ մի երկհարկանի տուն է գնում։ Շենքը գտնվում էր «Մեծ ծուռ» կոչված փողոցում (այժմ Լերմոնտովի փողոց)։ Տունը սկսվում էր Վելյամինովսկայա փողոցի (այժմ՝ Զնելաձեի փողոց) աջ անկյունից և իջնում մինչև Աբաս-Աբաթյան հրապարակ, որը մինչև այժմ գոյություն ունի նախկին չափերով, հիշեցնում է մեծ բակ և սովորական հանգրստավայր է տեղի բնակիչների համար։ Լայնարձակ բակի կողմից կիսակլոր աստիճանները տանում էին դեպի մեծ կամարակապ դահլիճը, որը կոչվում էր «դարբաս»։ Դա հայտնի «Շիրմազանյան դարբասն» էր, որ հաճախ հիշատակվում է հայ (նաև վրաց և ռուս) թատրոնի պատմության մեջ։ Դահլիճ իրենից ներկայացնում էր 30-32 մ մի շինություն, որի բարձրությունը 8-10 մ էր։ Դահլիճի առաստաղը հենվում էր ընկուզենու փայտից շինված երկու սյունի վրա, պատերը զարդարված էին պարսկական զարդանախշերով։ Կենտրոնում կախված էր բյուրեղապակյա շքեղ ջահը։ Տունը քանդելու ժամանակ դահլիճի առաստաղին հայտնաբերվել են 1502 կավե սափորներ, որոնք դրված են եղել դահլիճի ռեզոնանսի համար։ Ժամանակակիցների կարծիքով, տունը եղել է քաղաքի հնագույն ճարտարապետական կոթողներից մեկը։

Ըստ մեզ հասած տվյալների, «Շիրմազանյան դարբասը» որպես թատերասրահ առաջին անգամ օգտագործել է Թիֆլիսի ռուսական թատերախումբը։ Կովկասի փոխարքա կոմս Վորոնցովը իր վրա է վերցրել տեղի ժողովուրդներին կրթելու «առաքելությունը»։ Նրա նախաձեռնությամբ է սկսվել հետագայում քաղաքային թատրոնի կառուցումը Երևանյան հրապարակում, հայ մեծահարուստ Գաբրիել Թամամշյանի միջոցներով (բացումը՝ 1851 թ. նոյեմբերի 8-ին)[34]։ «Լսելով Շիրմազանյան դարբասի մասին, — գրում է Վասիլ Շիրմազանյանը, — Վորոնցովը անձամբ ուզում է տեսնել այդ շենքը։ Իմանալով Վորոնցովի ցանկությունը, Վարդանը (Գալուստ Շիրմազանյանի եղբայրը — Ա. Տ.) մեծ պատրաստությամբ ընդունում է Վորոնցովին։ Վերջինս ներկայանում է Ներսես կաթողիկոսի հետ և շատ է հավանում շենքը։ Նա առաջարկում է անմիջապես ժամանակավոր թատրոնի վերածել «դարբասը»։ Դահլիճում տեղավորում են մոտ չորս հարյուր աթոռ և հարմարեցնում մի քանի օթյակ»[35]։

Ինչպես տեսնում ենք, Վորոնցովի առաջարկած վերակառուցումից հետո է միայն տան դահլիճը վերածվել թատերասրահի։ Դա եղել է անկասկած 1845 թ. հետո, քանի որ Թիֆլիսի ռուսական թատերախումբը սկսել է գործել 1845 թ.

---

30 Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 62։

31 Նույն տեղում, էջ 386։

32 Լ. Բարայան, Ռուսահայ թատրոնի 50-ը («Գրական-դիտական ժողովածու», Թիֆլիս, 1908, էջ 104)։

33 Գր. Շիրմազան, նշվ. հոդվ., էջ 172։

34 Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 19։

35 Գր. Շիրմազան, նշվ. հոդվ., էջ 172։

սեպտեմբերի 20-ից, Մանեժի 350 տեղանոց դահլիճում[36]։ Մինչ այդ Թիֆլիսում հրապարակային ներկայացումներ չեն եղել, եթե չհաշվենք տնային ու դպրոցական ներկայացումները, օրինակ՝ Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» բեմադրությունը հայ, ռուս և վրաց թատերասերների նախաձեռնությամբ, իշխան Ռոման Բագրատիոնի տանը[37]։ Վկայություններ չունենք հաստատելու, թե Խաչատուր Աբովյանի «Խաղարկություն մանկանց» դպրոցական կատակերգությունը և «Ֆեոդորա կամ որդիական սեր» սենտիմենտալ դրաման 1841-ին ներկայացվել են «Շիրմազանյան դարբասում»[38]։ «Դարբասը» թատերասրահի է վերածվել Աբովյանի՝ Երևան մեկնելուց երկու տարի անց։ Մինչ այդ Աբովյանը, Ներսիսյան դպրոցում սովորելու տարիներին, մտերիմ էր Աղաշան Շիրմազանյանի հետ, լինում էր նրանց տանը, հետագայում էլ նամակագրական կապ է ունեցել[39], բայց թատերական գործը հետագայում է սկսվել։

1851 թ. Թամամշյանի թատրոնը (ճարտարապետ Ի. Սկուդիերի) արդեն պատրաստ էր, և ռուսական թատերախումբը թողնում է «Շիրմազանյան դարբասը»։ 1855 թ. «դարբասը» վարձում է Կիրիսելիձեի ղեկավարությամբ կազմված վրացական թատերախումբը[40]։ 1859 թ. միայն հայ թատերախումբը, Միքայել Պատկանյանի ղեկավարությամբ, մուտք է գործում Շիրմազանյանների դահլիճ։ Ոչ մի տեղեկություն չունենք, թե այստեղ 1859-ից առաջ ինչ խումբ է գործել կամ ինչ ներկայացում է տրվել հայերենով։ 1859 թ. ամռանը հայ գիմնազիստներից կազմված մի խումբ մասնավոր մի տան դահլիճում բեմադրել է Ստեփանոս Մանդինյանի «Պետրոս և Բարբարե կամ Հայք ի Վրաստան» պիեսը։ Հուլիսի 26-ին ներկայացումը կրկնվում է «Շիրմազանյան դարբասում»[41]։ Ներկայացման մասնակից Զաքար Գրիգորյանը գրում է, որ իրենց հաջողվել է վարձել այդ դահլիճը տաս ռուբլով[42]։ Վկայությունը կոնկրետ է ու հավաստի։ «Փոքրիկ տնային թատրոնը» գործել է մինչև 1861 թ. մարտի 4-ը։ Սա Պատկանյանի վերջին ներկայացման օրն է։ Մամուլը պահպանել է Պատկանյանի ֆինանսական օգնություն աղերսող հոդվածները։ Խումբը ցրվել է, վաճառելով թատրոնական գույքը, մի կերպ վճարելով պարտքերը և հազիվ խուսափելով քրեական պատասխանատվությունից[43]։ Պատկանյանի խմբին դուգընթաց այստեղ ներկայացումներ է տվել նաև Թիֆլիսի առաջին գիմնազիայի աշակերտներից կազմված մի խումբ, որի մեջ եղել է Գալուստ Շիրմազանյանի եղբորորդին՝ տասնհինգամյա Վասիլ Շիրմազանյանը։ «Բեմում շինված էին թախտեր, զարդարված զորգերով,—պատմում է Վասիլը։—... հանդիսականներից շատերը գալիս էին սեփական մթերքներով, մանավանդ համքարները կաղամբի մեջ փաթաթած խավիար, թունգանոցներով կարմիր գինի, կաղին և գրպանները ածած զանազան չոր մրգեր։ Ընդմիջումներին համքարները խմում էին կարմիր գինին բացականչելով կենացը թե այն դերասանների, որոնց խաղը գոպավորություն էր թողնում նրանց վրա, և թե այն պատմական հերոսների կենացը, որոնք բեմադրվում էին այդ օրը...»[44]։ Ժամանակի թատերական կենցաղը ներկայացնող շատ պերճախոս տեղեկություն է տալիս Վասիլ Շիրմազանյանը։ Համքարները, որ Թիֆլիսում «Ղեյնոբա» կոչվող հրապարակային թատերախաղերի կազմակերպիչներն ու մասնակիցներն էին, դառնում են դրամատիկական թատրոնի ամենաակտիվ հանդիսականները, այն համքարները, որոնք հետագայում՝ 1865 թվի հունիսի 28-ին,

36 Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 15։

37 Նույն տեղում, էջ 12։

38 Նույն տեղում, էջ 14։

39 Ա. Աբովյան, Երկ, հ. 10, Երևան, 1961, էջ 428։

40 Տե՛ս ՀՍՀ, հ. 8, էջ 487։

41 Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 29։

42 Զ. Գրիգորյան, Երիտասարդական հիշողություններ («Հուշարար», գիրք Գ, Թիֆլիս, 1913, էջ 20—22)։

43 «Մեղու Հայաստանի», 1861, № 40, էջ 410։

44 Նույն տեղում։

ըմբոստացան իրենց շահերը ոտնահարող քաղաքագլուխ Գալուստ Շիրմազանյանի դեմ և ավերեցին նրա տան երկրորդ հարկի մի մասը, փչացնելով նաև թատերասրահը[45], որտեղ վերջին հայերեն ներկայացումը տեղի էր ունեցել 1864 թվի սեպտեմբերի 7-ին («Արա Գեղեցիկ և Շամիրամ»)[46]։ Վասիլ Շիրմազանյանի հուշերից պարզվում է, որ թատերախումբը կոչվել է «Խենթերի խումբ», և բեմադրված առաջին պիեսներից մեկը եղել է Ա. Սուխովո-Կոբիլինի «Կրեչինսկու հարսանիքը»[47]։

Այսպիսով՝ արևելահայ պրոֆեսիոնալ դրամատիկական թատրոնի կազմավորման նախնական շրջանը կապվում է Թիֆլիսի Աբաս-Աբաթյան հրապարտկում եղած «Շիրմազանյան դարբաս» թատերասրահի հետ։ Այստեղ է սկիզբ առել արևելահայ նոր թատրոնը։ Ավանդությունը քաղաքագլուխ Գալուստ Շիրմազանյանին է դրել գործի գլուխ, մինչդեռ այստեղ երևում են Վարդանի, ապա նրա եղբորորդի Վասիլի անունները։ Իսկ Գալուստ Շիրմազանյանը մնում է արևելահայ նոր թատերագրության սկզբնավորողներից մեկը և իր նշանավոր պամֆլետ-կատակերգությամբ ունի իր պատվավոր տեղը հայ դրամայի և Աբովյանի ժամանակից սկզբնավորվող աշխարհաբար գրականության մեջ։

ФОРМИРОВАНИЕ ВОСТОЧНОАРМЯНСКОЙ ДРАМАТУРГИИ И ПЕРВЫЙ ТЕАТРАЛЬНЫЙ ЦЕНТР ТИФЛИСА

АРПИНЕ ТАТИНЦЯН

Резюме

Процесс формирования драматургии восточных армян относится к 20—30 гг. XIX в. Первыми деятелями нового театра восточных армян были А. Аламдарян, Х. Абовян, Г. Ширмазанян. В 40-х гг. XIX в. создаются пьесы Х. Абовяна, которые, по неподтвержденным сведениям, были поставлены в театральной зале «Ширмазанян дарпас». Но история «Ширмазанян дарпас» как театрального помещения, согласно летописи, начинается не с постановок пьес Х. Абовяна, а намного раньше—в 1836 г.

Зачинателем театрального дела принято считать видного общественного и театрального деятеля—Галуста Ширмазаняна. Он известен в истории армянского театра как драматург, а также как основатель первого действующего театрального помещения «Ширмазанян дарпас» в Тифлисе. Самое значительное из его драматических произведений—памфлет-комедия «Описание кое-каких дел епископа Карапета...». Это первый образец армянской социальной комедии. Существует предание, что она была поставлена Галустом Ширмазаняном на сцене «Ширмазанян дарпас» в 1836 г. С этого, согласно традиции, и начинается история театра «Ширмазанян дарпас». Первые армянские спектакли, действительно, были организованы в зале «Ширмазанян дарпас», но не в 1836 г., а в 1859. Это подтверждает множество фактов, а также племянник Г. Ширмазаняна—В. Ширмазанян. Первые сведения о переоборудовании залы дома Ширмазаняна связаны с именем наместника Закавказья графа Воронцова. По его приказу лишь в 1845 г. в зале «Ширмазанян дарпас» была построена театральная сцена. К делу создания театра «Ширмазанян дарпас», как видим, Г. Ширмазанян остается непричастным.

---

45 Գ. Զմշկյան, նշվ. աշխ., էջ 182։

46 Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 62։

47 Գր. Շիրմազան, նշվ. հոդվ., էջ 175։ Սո այսօր ընդունված է կարծել, թե «Կրեչինսկու հարսանիքը» առաջին անգամ բեմադրվել է 1865 թ. հունվարի 12-ին Թիֆլիսի քաղաքային թատրոնում (Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 65)։